

Արձանագրություն

Մայիսյան գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունից:

Նախագահությամբ՝ Մ. Աբգարյանի
Քարտուղարությամբ՝ Վ. Հարությունյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 63 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2013 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների մասին

Զեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2013 թվականին կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Վաղ գարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործադներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 6000 դրամ/ և դիզելային վառելանյութ 1լ՝ 350 դրամ, տեղափոխվել է համայնք և այն տրվել բնակչությանը:

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիրը, որի համար համայնքում կատարվել են աղբաթափման և աղբահեռացման աշխատանքներ:

Մայիսյան համայնքից 2կմ հեռավորության վրա է գտնվում Ծառաշեն թաղամասը, որտեղից 64 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց, սակայն գյուղապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել է տրանսպորտային միջոց:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում անհայտ կորած մայիսյանցիների ընտանիքները՝ տալով դրամական օգնություն:

Համայնքում խմելու ջուրն ապահովում և սպասարկում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ը, մատակարարելով 17 ժամյա ջրամատակարարում, սակայն շուրջօրյա մատակարարելու համար ավագանու որոշմամբ կատարվել է համայնքի կողմից ներդրում՝ 1000.0 միլիոն դրամի, հին խողովակները նորով փոխարինելու:

Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները, որից օգտվում են 60

ընտանիքներ: Նորոգվել է համայնքի 3 բարձրահարկ բազմաբնակարան շենքերի տանիքներ

Համայնքում դեռ մնում է չլուծված 30 հա տնամերձ հողամասերի լիովին ոռոգման հարցը:

2013 թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով համայնքում վնասվեց 50-100%-ի սահմաններում տուժվեցին 116 հա պտղատու, խաղողի և բանջարանոցային կուլտուրաները: Համայնքում անմիջապես կազմվել է հանձնաժողով, ճշտվել է վնասված տարածքները և ներկայացվել մարզպետարան:

Համայնքում կատարվել են փողոցների ավազապատման, հարթեցման աշխատանքներ, որը կազմում է շուրջ 15-20կմ:

Համայնքում Ամանորի միջոցառման նպատակով նախակրթական, ինչպես նաև 1-3-րդ դասարանի շուրջ 170 երեխայի տրվել են Ամանորի նվերներ: Ավարտելով ելույթը, Ե. Մովսիսյանը 2014թ. ցանկացավ բնակչությանը առողջություն և բերքառատ տարի:

Բյուջեի եկամուտները կազմում են.

- Հողի հարկի գանձումներ` 100.1 %
- Գույքահարկի գանձումներ` 100.1 %
- Համայնքի սեփական եկամուտները կազմում են` 100.4 %

Ավարտելով զեկույցը` Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքառատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:


Ելույթ ունեցան Հ. Հակոբյանը, Ա. Կիրակոսյանը, Ծ. Խաչատրյանը, Վ. Հավաթյանը, որոնք համայնքի ղեկավարի 2013 թվականի 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեցին բավարար: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ` Ա. Այվազյանը ցանկացավ բնակչությանը բարեկեցիկ կյանք, ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու համար, և 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը
4. Մշակույթի տան վերանորոգում

Հանձնաժողովի նախագահ`

քարտուղար`



Ս. Աբգարյան

Հարությունյան